# ««Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Արտոնագրերի մասին» 2021 թվականի մարտի 03-ի ՀՕ-108-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ գլխի վերնագրում «հարկադրական լիցենզիան» բառերից հետո լրացնել «առանց արտոնագրատիրոջ համաձայնության՝ ՀՀ կառավարության թույլտվությամբ, գյուտի օգտագործումը» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 72-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետը ուժը կորցրած ճանաչել.

2)4-րդ մասից հանել «արտակարգ իրավիճակների կամ ծայրահեղ անհրաժեշտության այլ հանգամանքների կամ» բառերը:

**Հոդված 3.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 74.1-րդ հոդվածով.

«Հոդված 74.1. Առանց արտոնագրատիրոջ համաձայնության՝ ՀՀ կառավարության թույլտվությամբ, գյուտի օգտագործումը

1. ՀՀ կառավարությունն իրավունք ունի արտակարգ իրավիճակների կամ ծայրահեղ անհրաժեշտության այլ հանգամանքներում՝ ազգային անվտանգության, սննդի, առողջապահության (ներառյալ՝ բժշկական ապրանքների հասանելիության և մատչելիության բացակայությունը) կամ կենսական այլ անհրաժեշտության ապահովմամբ պայմանավորված, երբ դա պահանջում է հասարակության շահը,

թույլատրել առանց արտոնագրատիրոջ համաձայնության գյուտի օգտագործումը՝ վերջինիս այդ մասին տեղեկացնելով ամենասեղմ ժամկետում և համաչափ փոխհատուցում վճարելով:

2. Սույն հոդվածով սահմանված առանց արտոնագրատիրոջ համաձայնության՝ ՀՀ կառավարության թույլտվությամբ գյուտի օգտագործման, վարձատրության կարգը և վարձատրության չափը հաստատում է ՀՀ կառավարությունը։»:

**Հոդված 4. Անցումային դրույթներ**

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 3-րդ հոդված 2-րդ մասով սահմանված՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման օրը։

2.Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ընդունվելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: